ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«18» հոկտեմբերի 2019 թվականի N: 527-Ա ք.Գյումրի

ԱՄԲԱԿՈՒՄ ՍԵՐՈԲՅԱՆԻՆ «ՓԱՆԻԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշման հավելվածի 71-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի հունվարի 30-ի N 23-Ն որոշման հավելվածի 71-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով «Փանիկի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2019 թվականի հոկտեմբերի 15-ի «Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» թիվ 3 որոշումը, եզրակացությունը և Ամբակում Սերոբյանի 2019 թվականի հոկտեմբերի 16-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2019 թվականի հոկտեմբերի 18-ից դադարեցնել Ամբակում Սերոբյանի՝ «Փանիկի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի լիազորությունները:
2. Ամբակում Սերոբյանին 2019 թվականի հոկտեմբերի 18-ից նշանակել «Փանիկի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի

պաշտոնում՝ կնքելով աշխատանքային պայմանագիր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետով:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է